

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՍՐՔՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԿԸ ԵՂԵՌՆԻՆ

Միքայել Շամտանճեանի՝ 1919-ին Պոլիս հրատարակած հատորին վերնագիրը թերեւս յարմարի բնութագրելու Երուսաղէմի վանքին ու միաբանութեան ենթարկուած վիճակն ու ունեցած կորուստները՝ Մեծ Եղեռնի տարիներուն: Հայ Երուսաղէմը զերծ մնացած էր օսմանեան կառավարութեան ընդունած տեղահանութեան օրէնքէն, նոյնիսկ վերածուած էր աքսորավայրի մը, աւելին՝ Կ. Պոլսոյ պատրիարքութեան եւ Կիլիկիոյ ու Աղթամարի կաթողիկոսութեանց պաշտօնապէս ջնջումով, կարճ ժամանակի մը համար ակամայ ստանձնած էր նաեւ Օսմանեան կայսրութեան հայութեան եկեղեցական կեդրոնն ըլլալու պարտականութիւնը: Այսինքն, բուն եղեռնը չէ, սակայն անոր հետեւանքները ծանրացած էին Ս. Աթոռի հազարամեայ ուսերուն վրայ:

Յարութիւն Արք. Վեհապետեան Պատրիարքի վախճանումէն (1910) վերջ առանց աթոռակալի մնացած Ս. Աթոռը, որ Համաշխարհային պատերազմի նախօրէին հիւծած էր ներմիաբանական կռիւներով, 10 Օգոստոս, 1916-ին օսմանեան կառավարութեան ընդունած որոշմամբ կը դառնար Թուրքիոյ հայոց կաթողիկոս-պատրիարքութիւն. «թրքական խելապատակէ ելած»<sup>1</sup> պաշտօն մը, զոր կը ստանձնէր 1915-ի Նոյեմբերին Երուսաղէմի վանքը ապաստանած Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսը (բնական է, կաթողիկոս-պատրիարքութիւնը ինքնաբերաբար պիտի լուծարուէր Օսմանեան Թուրքիոյ պարտութիւնը ամրագրող հրադադարի կնքումով, եւ պատերազմի տարիներուն իրենց պաշտօններէն հեռացուած գահակալներով վերստին պիտի հաստատուէին Կ. Պոլսոյ պատրիարքութիւնն ու Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը: Ս. Աթոռն ալ պիտի վերադառնար -գոնէ միջոցի մը համար- նախապատերազմեան անորոշութեան):

Զինադադարի քիչ թէ շատ խաղաղ շրջանէն յետոյ սակայն, Թուրքիոյ միլիական շարժումը պիտի յաղթանակէր եւ, Եղեռնէն ետք հայրենի ոստաններ վերադարձած հայերը վերջնականապէս պիտի ստիպուէին լքելու իրենց բնակատեղիները՝ վերստին բռնելու համար գաղթի ճամբան: Ծիշդ այդ շրջանին է որ յանձին Եղիշէ Արք. Դուրեանի նոր գահակալով մը օժտուած Ս. Աթոռը ակամայ պիտի դառնար Հայց. եկեղեցւոյ կեդրոնը. Մայր աթոռը համայնավարական իշխանութեան լուծին տակ էր, Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ամփոփուած էր Թուրքիոյ նորաստեղծ հանրապետութեան սահմաններուն մէջ, Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, Սիսէն տարագիր, նոր կայքի մը փնտռտուքի մէջն էր: Հակառակ այս բոլորին, Առաքելական Ս. Աթոռը, իր մեծանուն գահակալով, ոստումի մը մէջ էր՝ տնօրինական սուրբ տեղեաց ծառայելու հազարամեակներու առաքելութեան զուգահեռ, դպրոցներ կը հիմնուէին, մատենադարան ու գրադարան կը հաստատուէր, նոր հոգեւորականներ կը ձեռնադրուէին, Կիւլէսէրեանի, Օշականի, Պէրպէրեանի նման առինքնող դէմքեր կայք կը հաստատուէին հոն՝ ծաղկեցնելու Ս. Աթոռը, որ յիրաւի երկար ժամանակ պիտի դառնար Հայ եկեղեցւոյ անպաշտօն կեդրոնը:

Ինչպէս ըսուեցաւ, տեղահանութեան օրէնքը Երուսաղէմի հայութեան վրայ ուղ-

<sup>1</sup> Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս [Կիւլէսէրեան], Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս (տըպարան Դպրեվանոց կաթողիկոսութեան Կիլիկիոյ), 1939, սիւնակ 929:

ղակիօրէն ժխտական ազդեցութիւն մը չէ ունեցած, քանի որ անոնք քաղաքի մէջ փոքրամասնութիւն էին եւ սպառնալիք մը չէին նկատուեր: Անոնք պատերազմի արհաւիրքներն էին որ կը զգային իրենց մաշկին վրայ. զոր օրինակ՝ 1916-ին, երբ ժանտատենդը եւ հնդկախտը կը հարուածէր Երուսաղէմը, Ս. Հրեշտակապետաց վանքի մօտակայքը հաստատուած հայեր բացասաբար կ'ազդուին<sup>2</sup>: Յեղասպանութեան տարիներուն պատահած դէպքի մը արձագանգը կը գտնենք նաեւ փաստաթուղթի մը մէջ, որ կը պահուի օսմանեան արխիւի մէջ. 1917 թուականին առողջապահական բնագաւառի մէջ պաշտօնավարող շուրջ քսան հայեր կը հեռացուին իրենց պաշտօնէն: Բարձրագոյն դուռը կատարուածի մասին հաշիւ կը պահանջէ Երուսաղէմի տեղական կառավարիչներէն՝ ուղեւորվ տեղեակ դառնալ հայերու վտարման պատճառներուն<sup>3</sup>:

Պատերազմի աւարտին արդէն տասը հազար հայ գաղթականներ հասած էին Պաղեստին, որոնց մեծ մասը իրենց ճանապարհը շարունակելով կը փոխադրուի Փորտ-Սաիտ, իսկ չորս հազարի չափ կը մնայ Երուսաղէմ<sup>4</sup>: Ճեմալ փաշա, որ օսմանեան չորրորդ բանակի հրամանատարն էր եւ ապա նշանակուած էր Սուրիոյ եւ Արեւմտեան Արաբիոյ բանակի ընդհանուր հրամանատար, գոնէ իր իրաւասութեան տակ գտնուող տարածքէն ներս որդեգրած էր հայկական հարցի վերաբերեալ տարբեր քաղաքականութիւն մը եւ կը ջանար, ի գին հայերու բացարձակ վերացման կողմնակից գործիչներու թիրախը դառնալու, ամէն կերպով ողջ պահել զանոնք: Այս մասին իր յուշերուն մէջ կը վկայէ նաեւ Ճեմալ փաշայի անձնական քարտուղար Ֆալիհ Բեքը Աթայ: Ըստ վերջինիս, Ճեմալ փաշա կը հաւատար, որ հայերը վնասակար պիտի չըլլան Սուրիոյ մէջ, պայմանով որ հայկական մեծամասնութիւնը վերածուի փոքրամասնութեան, այսպէսով կարելի պիտի ըլլար հայութեան ներկայութիւնը դարձնել նաեւ հակակշիռ մը՝ ընդդէմ արաբական ազգայնականութեան<sup>5</sup>: Ճեմալ թերեւս ալ այս նպատակի իրագործման համար ջանացած է հայերը բնակեցնել Երուսաղէմի մէջ: Ճեմալ փաշա գերմանական *Der Neue Orient* թերթին տուած հարցազրոյցին մէջ յայտնած է, թէ բազմաթիւ հայ ընտանիքներ փոխադրած է Երուսաղէմ եւ զանոնք առած է իր պաշտպանութեան տակ<sup>6</sup>: Ճեմալ փաշայի այս յայտարարութիւնը կը հաստատեն նաեւ Սահակ Բ. Կաթողիկոս-պատրիարքն ու լատինաց պատրիարք Փիլիպպոս Քամասէյ: Անոնք կը վկայեն, թէ Ճեմալ փաշա հայ գաղութին 80 հազար ֆրանկ եւ հարիւր հազար քիլօ ցորեն տրամադրած է<sup>7</sup>: Օսմանեան արխիւին մէջ ի պահ կը մնայ նաեւ Սահակ կաթողիկոս-պատրիարքէ 12 Սեպտեմբեր, 1916 թուակիր վաւերաթուղթ մը, ըստ որու ան նորահաստատ կաթողիկոս-պատրիարքութեան կայացման նպատակով կը խնդրէ կառավարութեան նիւթական ու բարոյական աջակցութիւնը՝ նշելով, թէ Երուսաղէմի պատրիարքութիւնը նիւթական ծանր պարտքերու տակ է (ինչպէս յայտնի է, Առաջին աշխարհամարտի անմիջական նախօրէին Ս. Աթոռը, զուրկ գահակալէ, ելմտական ու վարչական ներքին հարցերով զբաղած էր. նոյնիսկ Կ. Պոլսոյ Ազգային ժողովը այս հարցերուն լուծում մը գտնելու նպատակով որպէս քննիչ առաքած էր նախկին պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեանն ու հանրային գործիչ, գրագէտ Վահան Թէքէեանը): Ընդառաջելով կաթո-

<sup>2</sup> Roberto Mazza, Jerusalem From the Ottomans to the British, Tauris Academic Studies, London-New York, 2009, էջ 62:

<sup>3</sup> İhsan Satış, “Kudüs’te Ermeniler” [Հայերը Երուսաղէմի մէջ], Filistin Araştırmaları Dergisi, No: 1 (ամառ 2017), էջ 26:

<sup>4</sup> Mazza, էջ 62:

<sup>5</sup> Falih Rifki Atay, Zeytindağı [Զիթեմէտ Լեռ], İstanbul, 2023, էջ 75:

<sup>6</sup> İhsan Satış, էջ 28:

<sup>7</sup> Անդ:

ղիկոս-պատրիարքի պահանջքին, վանքին կը տրամադրուի 2500 լիրա յաւելեալ օժանդակութիւն մը, ինչպէս նաեւ հինգ հազար քիլօ ցորեն<sup>8</sup>:

Երուսաղէմի վանքը Մեծ Եղեռնի հետեւանքները հետագայ տասնամեակներուն շատ աւելի բուռն զգացած է: Յայտնի է, որ մինչեւ Ապրիլ 1917 թուականը վանքը զերծ կը մնար յատկապէս հայոց դէմ ի գործ դրուած ճնշումներէն<sup>9</sup>: Ժառանգաւորաց վարժարանէ ներս ալ կը շարունակուէին դասերը: Արմաշի դպրեւանքի տասներեք սաներն ալ, որոնք ամռան արձակուրդի առթիւ մնացած էին Արմաշ, գլխաւորութեամբ նորօծ երկու վեղարաւորներու՝ Մամբրէ Սիրունեանի, որ պիտի ստանձնէր Ժառանգաւորացի տեսչութիւնը<sup>10</sup>, եւ Խորէն Թաշճեանի<sup>11</sup>, եկած էին Երուսաղէմ: Դասերը կը խափանուին սակայն 12/25 Ապրիլ, 1917 թուականին, երբ Ժառանգաւորաց վարժարանի այս նոր աշակերտները կը զինուորագրուին<sup>12</sup> ու կը պարտադրուին երթալ Դամասկոս<sup>13</sup>:

Հայ եկեղեցւոյ հարկը Մեծ Եղեռնին՝ չափազանց ծանր եղած է: Եկեղեցական կեդրոններ երբեք չեն կրցած նուաճել իրենց դիրքերը, զորս ունեցած էին Եղեռնի նախօրէին: Թերեւս Երուսաղէմը միակն է որ ծաղկած է Եղեռնի վաղորդայնին, վերելք ապրած է եւ երբեք չէ երանած նախեղեռնեան իր վիճակին: Այս իմաստով Երուսաղէմի՝ Եղեռնին վճարած հարկը անարդիւնք մնացած չէ. նահատակութեան բաժակը ցմրուր ըմպած ու մարտիրոսութեան պսակը իրենց գլխուն թագ ըրած միաբաններ, որպէս Ս. Աթոռի ժամանակակից պատմութեան նոր վկաներ, իրենց վարդապօղն արեամբ կնքած են Ս. Յակոբ Գլխադիրի, Ս. Յակոբոս Տեառնեղբօր եւ Ս. Մակարի կենսատու շիրիմներուն առջեւ կատարած իրենց ուխտը:

Երուսաղէմի նահատակ միաբաններու անունները թերեւս առաջին անգամ արձանագրած է անուանի բառարանագիր, բանասէր Սիմոն Գաբամաճեան, իր «Գրպանի տարեցոյց»ին մէջ, որպէս «1914ի Ընդհ. Պատերազմի ընթացքին թրքական եղեռնէն նահատակուած զոհեր»<sup>14</sup>: Գաբամաճեանի տուած անունները հետեւեալներն են.

Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեան (տարէնտէցի<sup>15</sup>)

Յովսէփ Վրդ. Սողոմոնեան (սուէտիացի)

Կարապետ Վրդ. Տէր Գաբրիէլեան<sup>16</sup> (չնգուշցի)

Երեմիա Վրդ. Լիֆոռեան (քէսապցի)

Աբգար Վրդ. Եօթնեղբայրեան (ուրֆացի)

Սահակ Վրդ. Սարգիսեան (վանեցի)

Մելքիսեդեկ Վրդ. Հովիւեան (երզնկացի)

Այս անուններու ճշդութիւնը ստուգեցինք այլ աղբիւրներէ եւս, ուստի աւելորդ չ'ըլ-

<sup>8</sup> Անդ. էջ 27:

<sup>9</sup> Raymond Kévorkian, *Ermeni Soykırımı [Le Génocide des Arménies]*, ֆրանսերէնէ թրքերէնի թարգմանեց՝ Այլէն Թաշճեան-Էֆմէլի, İstanbul, 2015, էջ 950:

<sup>10</sup> Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, Թէհրան, 2014, էջ 176:

<sup>11</sup> Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քինյ. Արգումանեան, Ազգապատում, Դ հատոր, Ս. Վարդան մատենաշար, Նիւ Եորք, 1995, էջ 143:

<sup>12</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Խոհի եւ Խօսի, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1929, էջ 345-346:

<sup>13</sup> Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քինյ. Արգումանեան, նշ. աշխ., էջ 285:

<sup>14</sup> «Գրպանի տարեցոյց», կազմեց՝ Սիմոն Գաբամաճեան, Գ տարի, 1922, Կ. Պոլիս (տպ. Պետրոս Պալլըզեան), էջ 50:

<sup>15</sup> Գաբամաճեան սխալմամբ որպէս խարբեղցի արձանագրած է:

<sup>16</sup> Գաբամաճեան Սարգիսեան գրած է:

լար զանոնք ճանչնալ ու ծանօթանալ իրենց կատարած գործունեության:

**Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեան (տարէնտէցի)** - 1864-ին ծնած էր Սեբաստիոյ Տարենտէ բնակավայրը, որ կը գտնուի Սեբաստիոյ, Խարբերդի ու Մարաշի սահմաններու միացման կէտին վրայ: Տարածուած է Թոգմա / Մելոս գետի երկու եզերքը, Կիրինէ դէպի Մալաթիա երկարող ճամբուն վրայ: Նախքան Մեծ Եղեռնը, Տարենտէի բնակչութիւնը շուրջ 15 հազար էր. 1500 հայ, իսկ մնացեալը՝ թուրք: Տարէնտէի հայք ունեցած են երեք եկեղեցի ու երեք դպրոց: Հոն կար նաեւ Ս. Կարապետ վանքը<sup>17</sup>:

Տարէնտէի մէջ շուրջ 13-15 Հազարապետեան ընտանիք եղած է<sup>18</sup>: Այդ ընտանիքներէն մէկուն զաւակն էր Անանիա, որ իր նախնական կրթութիւնը ծննդավայրի մէջ ստանալէ ետք, 23 տարեկանին հասած է Երուսաղէմ՝ ծառայելու տնօրինական սրբատեղիներու<sup>19</sup>: Եղած է Ժառանգաւորաց վարժարանի կառավարիչ, մինչեւ 1892 թուականը, երբ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է Յարութիւն Արք. Վեհապետեան Պատրիարքի ձեռամբ: 1894-1895 թուականներուն եղած է տեսուչ Ս. Փրկիչ վանքի<sup>20</sup> եւ Ս. Աստուածամօր տաճարի<sup>21</sup>: 1896-1907 թուականներուն վարած է նախ Եղեսիոյ առաջնորդական տեղապահի, ապա՝ առաջնորդի պարտականութիւնը՝ «մետասանամեայ արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը բոլորելով հոն»<sup>22</sup>:

Որոշ աղբիւրներու համաձայն եպիսկոպոս ալ ձեռնադրուած է, սակայն այս ուղղութեամբ ժամանակի մամուլին կամ եկեղեցական պատմութեան վերաբերող հրատարակութիւններու մէջ որեւէ վկայութեան չհանդիպեցանք: Զոր օրինակ, Եղիշէ Հազարապետեան կը վկայէ, թէ Ուրֆայի առաջնորդութեան միջոցին Անանիա Վարդապետը այցելած է իրենց Մարաշի տունը՝ «եպիսկոպոս ձեռնադրուելու համար Սիս երթալու միջոցին»<sup>23</sup>:

Եղեսիոյ առաջնորդութենէ ետք գացած է Պոլիս, ուր վարած է քարոզչական պաշտօններ<sup>24</sup>: 25 Օգոստոս, 1908-ին գումարուած Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանական ժողովը զինք ու տարբեր պատճառներով վանքէն վտարուած կամ տարագրուած, աստ ու անդ ցրուած միաբանները կ'որոշէ ներել ու հրաւիրել Երուսաղէմ՝ միասնաբար դարման մը խորհելու համար տիրող կացութեան<sup>25</sup>: Միաբանական ընդհանուր ժողովի՝ առ ի գործադրութիւն Յարութիւն պատրիարքին յղած այս կարգադրութիւններուն թէեւ ընթացք չէ տրուած, սակայն այդ շրջանին Անանիա Վրդ. Հազարապետեան անձնական պատճառներ ցոյց տալով մերժած է վերադառնալ վանք<sup>26</sup> ու շարունակած է մնալ Պոլիս:

Պոլիս գտնուած շրջանին կ'իյնայ ամբաստանութեան մը տակ: Զինք ամբաստանողներէն մէկն էր Կարապետ Համամճեան: 22 Օգոստոս, 1908-ին Ղալաթիոյ խորհրդ-

<sup>17</sup> Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, կազմեց՝ Առաքել Ն. Պատրիկ, Բ հատոր, Նիւ Ճըրզի, 1983, էջ 413:

<sup>18</sup> Եղիշէ Հազարապետեան, Ինչպէս ապրեցանք - Տարէնտէ, շրջակայ հայ գիւղերը եւ ընտանեկան յուշեր, տպ. Շիրակ, Պէյրութ, 1968, էջ 20:

<sup>19</sup> Թէոդիկ, նշ. աշխ., էջ 176:

<sup>20</sup> Մկրտիչ Եպս. Աղաւունքի, Միաբանք եւ այցելութ Հայ Երուսաղէմի, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1929, էջ 16:

<sup>21</sup> Թէոդիկ, նշ. աշխ., էջ 176:

<sup>22</sup> Անդ:

<sup>23</sup> Եղիշէ Հազարապետեան, նշ. աշխ., էջ 21:

<sup>24</sup> Անդ:

<sup>25</sup> Մ. Տ. Ս., Երուսաղէմի վերջին դէպքերը - Վանքը - Միաբանութիւնը, 1908, էջ 6-7:

<sup>26</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 5884-5886:

դարանին մէջ այս առթիւ կազմուած պատուոյ ատեանը նիստ մը կը գումարէ: Յանձնաժողովը կ'ունենդրէ կողմերու բացատրութիւնները եւ հաշտարար դիրք մը կը բռնէ՝ անպարտ արձակելով Հազարապետեանը<sup>27</sup>:

Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեան 1913 թուականին կը դառնայ Բաբերդի առաջնորդ<sup>28</sup>: 18 Մայիս, 1915 օսմանեան իշխանաւորները կը ձերբակալեն Բաբերդի առաջաւոր դէմքերը, շուրջ ութսուն անձ, առաջնորդ Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեանի գլխաւորութեամբ: Ֆրանսայի Նաւատորմի պատմութեան ծառայութեան արխիւային նիւթերուն համաձայն, Բաբերդի գաւառապետ Եանիացի Մեհմետ Նուրետ պէյի հրամանատարութեան տակ գործող հրոսակախումբի ընկերակցութեամբ հայ երեւելիները կ'ուղարկուին Տղունք գիւղը, ուր անոնք կ'արգելափակուին միւֆթի Քուրուճա Քորուղի պատկանող ախորին մէջ: Նախ քուրտ եւ թուրք հրոսակներ կը կողոպտեն զանոնք, իսկ Մայիսի 21-ին ալ գաւառապետը զանոնք կախաղան կը բարձրացնէ Ճոռոխ գետի ափին, թմբուկներու նուագակցութեամբ<sup>29</sup>:

Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեանի սպանութեան պարագաներուն շուրջ վկայութիւն մը կը կարդանք նաեւ Նիւ Եորքի «Կոչնակ»ին մէջ, որու աղբիւրն է Թիֆլիսի «Հորիզոն»ը: «Բաբերդի աղէտը» ենթախորագրով տրուած լրատուութեան համաձայն, 15 Մայիսին Բաբերդ քաղաքի հարուստներէն Հաճի Սիմոն, Համազասպ, Արշակ եւ Տրդատ Սիմաւոնեան, Յակոբ Աղբարեան, Վաղարշակ Լուսիկեան, Կարապետ Սարաֆեան, Կարապետ Տիւլտիւլեան, գլխաւորութեամբ առաջնորդ Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեանի, կը ձերբակալուին տեղական կառավարութեան կողմէ: Անոնք կը տարուին քաղաքէն չորս-հինգ մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Ուրպանիօղլու տէրէ կոչուած վայրը ու կը սպաննուին: Երբ ժողովուրդը իմանալով այս սպանութեանց մասին ահ ու դողի մէջ կ'իյնայ, կառավարութիւնը կը յայտարարէ, թէ անոնք լրտեսութիւն կ'ընէին, թշնամիներուն դրամ կը ղրկէին եւ ժողովուրդը ապստամբութեան կը հրաւիրէին<sup>30</sup>:

Ս. Աթոռոյ միաբանութեան անդամ Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեանի կախաղանով սպանուած ըլլալը կը հաստատէ 10 Օգոստոս, 1915 թուակիր այլ վկայութիւն մը եւս, որ կը պատկանի Վիքթորիա Խաչատուր Պարութպաշեանի: Տիկինը այս վկայութիւնը կատարած է Միացեալ Նահանգներու դեսպան Մորկընթաունի: «Հայոց՝ Բաբերդէ հեռանալէ երեք օր առաջ, շաբաթ մը բանտարգելութենէ ետք, Անանիա Եպսկ. Հազարապետեան [sic.] եւ յառաջատար ընտանիքներէ եօթ հոգի եւս կախաղան հանուեցան ու սպանուեցան»<sup>31</sup>:

Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեանի նահատակութեան դրուագին վերաբերեալ կան երկու այլ վարկածներ եւս: Անոնցմէ մէկը կը պատկանի զինադադարի շրջանին Պոլիս գալով Զաւէն Արք. Տէր Եղիայեան Պատրիարքին ներկայացած յոյնի մը: Ըստ իր

<sup>27</sup> «Բիւզանդիոն», Պոլիս, 23 Օգոստոս 1908, էջ 3, նաեւ՝ Ամէնուն տարեցոյցը, Պոլիս, 1910, էջ 76:

<sup>28</sup> Աղանունի սխալմամբ Բաղէշի առաջնորդ նշանակած է զիմֆ՝ հոն ալ դնելով իր մահուան վայրը:

<sup>29</sup> Raymond Kévorkian, նշ. աշխ., էջ 424:

<sup>30</sup> «Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, 18 Մարտ 1916, թիւ 12, էջ 303: Այս վկայութիւնը տեղ գտած է նաեւ Ճէյմս Պրայսի ու Առնոլտ Թոմպիի պատրաստած Կապոյտ գիրքին մէջ, տե՛ս James Bryce-Arnold Toynbee, *Osmanlı İmparatorluğu'nda Ermenilere Yönelik Muamele*, 1915-1916 [The Treatment of the Armenians in the Ottoman Empire, 1915-1916], հտ. Ա. թրքերէնի թարգմանեց Անիտա Կիւնէր, Ստամպուլ, 2005, էջ 466:

<sup>31</sup> James Bryce-Arnold Toynbee, էջ 463: Խիստ հաւանաբար Կապոյտ գիրքին մէջբերում կատարելով Անանիա Ծ. Վարդապետի մահուան պարագաներուն անդադարձած է նաեւ պատմաբան-հրապարակախօս Ռընէ Փինօ (1870-1958), տե՛ս René Pinon, *La suppression des Arméniens. Méthode allemande, travail turc* [Հայերու ջրնջումը. գերմանական մեթոտ, թրքական գործ], Փարիզ, 1916: Վերջինիս ու վարդապետի մահատակումի մասին ակնարկներ տե՛ս նաեւ Եղիշէ Հազարապետեան, նշ. աշխ. էջ 21:

խոստովանութեան, Բաբերդի կառավարիչները կ'ըսեն հայր-սուրբին, թէ ապահով ձեռով մը Պոլիս պիտի ղրկուի՝ Տրապիզոնի վրայով: Իր մեկնումէն երկու օր վերջ կառապան մը կու գայ քաղաք եւ կ'ըսէ, թէ Տրապիզոնի առաջնորդը բերած է: Ուրեմն կարելի էր եզրակացնել, թէ Տրապիզոնէ ճամբայ հանուած Գէորգ Ծ. Վրդ. Թուրեան եւ Բաբերդէն հեռացող Անանիա Վարդապետը հանդիպած էին մահուան ճանապարհին եւ միասին նահատակուած՝ իրենց ընկերացող ժանտարմաներու կողմէ<sup>32</sup>: Վերջիններս Կիւմիշխանէէն անդին՝ Մատրակի մօտերը կառքէն վար առեր եւ շարաշար նահատակեր էին նուիրեալ հոգեւորականները<sup>33</sup>:

Իսկ երկրորդ վկայութիւնը կը պատկանի Բաբերդէն վերապրող Աստղիկ Պաղտասարեանի: Ըստ իրեն, նախ եկեղեցականները կը բանտարկեն, կը շարշարեն եւ իբրեւ սնունդ անասունի դիակ կու տան անոնց: Բանտ ճաշ տանող հայուհի մը կը սպաննուի: Հարիւրաւոր երեւելիներ կը ձերբակալուին եւ կը տարուին ողջակիզուելու, իսկ հոգեւորականները առաջնորդարանի փայտանոցը կ'արգելափակուին. հոն օրերով անխնայ կը տանջեն զիրենք, յետոյ քարիւղ թափելով վրանին՝ կը վառեն<sup>34</sup>:

**Յովսէփ Վրդ. Սողոմոնեան (անտիոքցի)** - Ծնած է 1860-ին (կարելի չեղաւ յստակեցնել իր ծննդավայրը): Զեռնադրուած ու միաբանութեան անդամ դարձած է 1886-ին: 1889-1890 թուականներուն եղած է Յարութիւն Արք. Վեհապետեան Պատրիարքի գաւազանակիրը եւ վարած՝ հիւրընկալի պաշտօն: Վարած է նաեւ տեսչական պաշտօններ Ս. Յարութեան տաճարի (1891-1892), Բեթղէհէմի Ս. Ծննդեան տաճարի (1900-1901 եւ 1907-1908<sup>35</sup>), Յոպպէի Ս. Նիկողայոս վանքի մէջ (1908)<sup>36</sup>: 20 Նոյեմբեր, 1908-ին, Յարութիւն Պատրիարքի դէմ՝ հաշուեխոյս հոգեւորականներու ձեռնարկած յեղաշրջումէն վերջ, 24 Նոյեմբերին տեղի ունեցած ընտրութեան արդիւնքին Յովսէփ Վրդ. Սողոմոնեան եւս անդամ կ'ընտրուի Տնօրէն ժողովի (Եղիա Յովհաննէսեան, Գարեգին Սաքալեան, Սամուէլ Կիրակոսեան, Եսայի Կարապետեան, Կարապետ Տէր Կարապետեան ու Յարութիւն Պարոնեան վարդապետներու հետ)<sup>37</sup>: 1909 թուականին, սահմանադրութեան հռչակումէն ետք ստեղծուած կացութեամբ, նոր վիճակ մը կը ստեղծուի նաեւ Երուսաղէմի մէջ՝ Յարութիւն Պատրիարքը ստիպողաբար պաշտօնէ կը հեռանայ, կ'ընտրուի տեղապահ ու կը նորոգուին վարչական ժողովները<sup>38</sup>: Խիստ հաւանաբար այդ շրջանին Յովսէփ Վրդ. Սողոմոնեան եւս, ուրիշներու նման, կը հեռանայ վանքէն ու կը վերադառնայ ծննդավայրը, ուր ալ կը նահատակուի 1915-ին: Ս. Յակոբի վանքին համար յիշատակ ձգած է մթերանոց մը, Երուսաղէմի մէջ<sup>39</sup>:

**Կարապետ Վրդ. Տէր Գաբրիէլեան (չնգուշցի)** - Ծնած է 1872-ին Զնգուշ: Աշխարհական անունը Նոյնպէս Կարապետ էր: Իր սկզբնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ: 30 տարեկանին ընտանեօք գաղթած է Խարբերդի Խոյլու գիւղը, ուր կալուածներ ունեցած է<sup>40</sup>: Խոյլու պատմական Թլկատինն է, որ Ի դարասկզբին ունէր աւելի քան

<sup>32</sup> Թէոդիկ, նշ. աշխ., էջ 176:

<sup>33</sup> Անդ, էջ 417:

<sup>34</sup> Անդ, 176-177:

<sup>35</sup> Ն. Եպս. Ծովական, «Հայկական վանքեր», «Արմո» ամսագիր, Նոյեմ.-Դեկտեմ. 1952, թիւ 11-12, էջ 329:

<sup>36</sup> Մկրտիչ Եպս. Աղաւունքի, նշ. աշխ., էջ 393:

<sup>37</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 5898:

<sup>38</sup> Անդ, սիւնակ 5935-5959:

<sup>39</sup> Մկրտիչ Եպս. Աղաւունքի, նշ. աշխ., էջ 393:

<sup>40</sup> Թէոդիկ, նշ. աշխ., էջ 201:

3000 հայ բնակչություն<sup>41</sup>: Կողակցին տարածամ մահէն ազդուած՝ կուսակրօնութեան ուխտ կը կատարէ, եւ որպէս Երուսաղէմի միաբան, 21 Յուլիս, 1901-ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Յարութիւն Պատրիարքէ<sup>42</sup>: 1903-1906՝ ժամարար ի Դամասկոս, 1910-1911՝ վարձընկալ եւ հիւրընկալ ի Ս. Աթոռ: Այնուհետեւ կը հրաժարի միաբանութենէ եւ կ'առանձնանայ Խարբերդի մօտակայ Դատեմու Ս. Աստուածածին վանքը, ուր ալ կ'ընդունի մարտիրոսութեան պսակը<sup>43</sup>: Ըստ Աղաւնունիի, Կարապետ Վարդապետը Երուսաղէմը լքելէ ետք, 1911-ին նախ մեկնած է Մուշ, իսկ նահատակութեան թուականն դրած է 1914-ին<sup>44</sup>:

**Երեմիա Վրդ. Լիֆոռեան (քէսապցի)** - Ծնած է 1875-ին եւ ձեռնադրուած՝ 1902-ին: 1908-ին Երուսաղէմի վանքին մէջ պատահած խռովութիւններէ վերջ, Լիֆոռեան մէկն էր այն վեց արեղաներէն, որոնց հեռացումը կը պահանջուէր նորոգ վարչութեան կողմէ: Ան եղած է նաեւ Պէյրութի հոգեւոր տեսուչը<sup>45</sup>: Նահատակուած է Պիրէճիկի մէջ, 1915-ին<sup>46</sup>:

**Աբգար Վրդ. Եօթնեղբայրեան (ուրֆացի)** - Ծնած է 1870-ին, Եդեսիա քաղաքը: Աւագանի անունով Գէորգ: Սարկաւագութեան շրջանէն սկսեալ աշխոյժ մասնակցութիւն բերած է ներմիաբանական հակառակութեանց՝ մաս կազմելով Մաքսուտեան-Երէցեան խմբակին: Այնքան որ, հաշուեպահանջ հոգեւորականներու խմբակը, երբ իշխանութիւնը ձեռք կ'անցընէ, կը պահանջէ անմիջապէս Երուսաղէմէն վտարել նաեւ Գէորգ Սարկաւագը<sup>47</sup>: Ներմիաբանական բուռն պայքարի շրջանին, ան կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի 1909 թուականին, ստանձնելով վանքի գանձապահի պաշտօնը<sup>48</sup>: Յունուար 1910-ին, երբ իթթիհատականներու ալ միջամտութեամբ վանքէն ներս յարաբերական խաղաղութիւն կը հաստատուի, գոնէ առժամապէս, Աբգար Եօթնեղբայրեան, երկու այլ միաբանի հետ միասին, ոստիկաններու հսկողութեամբ կը հեռացուի վանքէն, դէպի Յոպպէ<sup>49</sup>: Աբգար Վարդապետը 1910-ին կ'երթայ Պոլիս<sup>50</sup>:

1912-ին կ'ընտրուի Խնուսի առաջնորդական տեղապահ. պաշտօն մը, զոր կը վարէ մինչեւ իր նահատակութիւնը՝ պատահած 1915-ին: Վարդապետը կը նահատակուի իր թեմի 12 հազար հաշուող ժողովուրդի հետ, Վարդոյի Չրջատաղ կոչուող վայրը<sup>51</sup>:

Աբգար Վրդ. Եօթնեղբայրեան Խնուսի առաջնորդական տեղապահութեան շրջանին, Օգոստոս 1912-ին, Վերափոխման տաղաւարի տօնի շրջանին, կարնեցի ուխտաւորներու հետ կ'այցելէ Մշոյ Ս. Կարապետի վանքը, ուր կը տեսակցի Ներսէս Եպս. Խառախանեանի հետ: Վանքէն բաժնուելէ ետք, կ'այցելէ Եփրատի ձախ ափին գտնուող

<sup>41</sup> Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1988, էջ 456:

<sup>42</sup> Աղաւնունի ձեռնադրութեան թուականը կը դնէ 1902-ին, տե՛ս Մկրտիչ Եպս. Աղաւնունի, նշ. աշխ., էջ 195:

<sup>43</sup> Թէոդիկ, նշ. աշխ., էջ 201:

<sup>44</sup> Մկրտիչ Եպս. Աղաւնունի, նշ. աշխ., էջ 195:

<sup>45</sup> Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Երեւան, 1985, էջ 105:

<sup>46</sup> Անդ, էջ 137:

<sup>47</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 5906:

<sup>48</sup> Մկրտիչ Եպս. Աղաւնունի, նշ. աշխ., էջ 1: Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Երեւան, 1985, էջ 181:

<sup>49</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 5956:

<sup>50</sup> Մկրտիչ Եպս. Աղաւնունի, նշ. աշխ., էջ 1: Աղաւնունի վարդապետին որպէս Պոլիս մեկնելու թուականն նշած է 1909-ը:

<sup>51</sup> Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Թէհրան, 2014, էջ 181:

Խպեան գիւղը՝ ըլլալով հիւրը Եղիշէ Տէր Կարապետեանի, որ եղբայրն էր օսմանեան խորհրդարանի երեսփոխան, անուանի գրող Գեղամ Տէր Կարապետեանի (Մշոյ տատարակ)։ Վարդապետը կ'այցելէ նաեւ Ս. Առաքելոց վանքը եւ կը հիւրընկալուի վանահայր Յովհաննէս Ծ. Վարդապետի կողմէ։ Արգար Վարդապետը այդ տարիներուն ուխտաւորաբար կ'ուղեւորուի նաեւ Մշոյ այլ վանքերը, ինչպէս՝ Բռնաշէնի Ս. Աղբերիկը, Մանրավանքը, որու մօտակայքին կը խոնարհի Ս. Սահակ Պարթեւի ու Ս. Վարդանի դստեր՝ Ս. Շուշանիկի դամբարաններուն առջեւ, կը հասնի մինչեւ Հացեկաց գիւղը՝ ծննդավայրը Ս. Մեսրոպի։ Արգար Վրդ. Եօթնեղբայրեան այս ուխտագնացութիւններու մասին յօդւածներ ալ գրի կ'առնէ Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթի մէջ, որ այդ օրերուն կը հրատարակուէր «Հեռաձայն» անունով<sup>52</sup>։

**Սահակ Վրդ. Սարգիսեան (վանեցի) -** Ձեռնագրուած է 1905-ին։ Եղած է տեսուչ Ս. Փրկիչ վանքի (1906-1907)<sup>53</sup>։ Մէկն էր հաշուեպահանջ խումբէն, որու անդամներէն ոմանք (եւեմտից տեսուչ Մատթէոս Վրդ. Գայրգճեան, Աւագ Թարգման Սարգիս Վրդ. Աճէմեան, Ժառանգաւորացի տեսուչ Պետրոս Վրդ. Սարաճեան), Նոյեմբեր 1908-ին, վանքէն ներս պատահած խռովութիւններու պատճառով անձնական ապահովութեան մտահոգութիւններով ապաստանած էին Ռամլէի Ս. Գէորգ վանքը<sup>54</sup>։ Երուսաղէմ վերադառնալով հանդերձ, կարճ ժամանակ անց կը միանայ Յոպպէ ապաւինողներու խմբակին<sup>55</sup>։ Ապրիլ 1909-ին գումարուած Միաբանական ժողովը կարգալոյծ կը հռչակէ Սահակ Արեղայ Սարգիսեանը, որովհետեւ որպէս ժամարար Դամասկոս երթալու ճամբուն վրայ տեղացիներու համաձայնութեամբ ձեռք անցուցած էր Յոպպէի տեսչութիւնը<sup>56</sup>։ Այս որոշումէն ետք Սարգիսեան կ'անցնի Պոլիս, ուր կը միանայ հաշուեպահանջ վարդապետներու խմբակին։ 1910-ին, երբ յարաբերական անդորր կը հաստատուի վանքէն ներս, Սահակ Արեղայ Սարգիսեան ալ ընկերակիցներուն հետ կը վերադառնայ վանք, ուր կը ստանձնէ տարբեր պաշտօններ, ինչպէս հիւրընկալ (1911-1912), տեսուչ Բեթղէհէմի Ս. Ծննդեան տաճարի (1912) եւ Պէյրութի (1914)<sup>57</sup>։ Սահակ Վրդ. Սարգիսեան 1916-ին նահատակուած է Տիգրանակերտի մէջ<sup>58</sup>։

**Մելքիսեդեկ Վրդ. Հովիւեան (երզնկացի) -** Հաստ Աղաւնունիի, ծնած է 1874 թուականին<sup>59</sup>, իսկ Թէոդիկի համաձայն ալ՝ 1878-ին<sup>60</sup>, Երզնկայի Մթննի կամ Մթնի գիւղը։ Գիւղը, որ այժմ կը կրէ Կիւմիւշթարլա անունը, Մեծ Եղեռնի նախօրէին եղած է հայաշատ բնակավայր մը՝ Ս. Յակոբ եկեղեցիով<sup>61</sup>։ Մելքիսեդեկ Վարդապետի աւագանի անունը եղած է Գրիգոր։ Ան իր նախնական կրթութիւնը ստացած է Երզնկայի Ռուբինեան եւ Կեդրոնական վարժարաններուն մէջ։ Ապա գացած է Երուսաղէմ, ուր 1901-ին աւարտած է Ժառանգաւորաց վարժարանը։ Եղած է վարժարանի փոխտեսուչ, ուսուցիչ եւ հուսկ՝ տեսուչ, 1909-ին։ Սարկաւագութեան շրջանին, 1906-ին, ընտրուած է Ս. Աթոռոյ

<sup>52</sup> Արգար Վրդ. Եօթնեղբայրեան, «Տարօնոյ վանքեր», Հեռաձայն, Պոլիս, 27 Օգոս. / 9 Սեպտ., 3 / 16 Սեպտ. 1913։

<sup>53</sup> Մկրտիչ Եպս. Աղաւնունի, նշ. աշխ., էջ 446։

<sup>54</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 5896։

<sup>55</sup> Անդ, սիւնակ 5901։

<sup>56</sup> Անդ, սիւնակ 5911։

<sup>57</sup> Մկրտիչ Եպս. Աղաւնունի, նշ. աշխ., էջ 446։

<sup>58</sup> Անդ։

<sup>59</sup> Անդ, էջ 278։

<sup>60</sup> Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, Թէհրան, 2014, էջ 161։

<sup>61</sup> Ռուբերտ Թաթոյեան, Երզնկա – եկեղեցիներ եւ վանքեր 1, «Յուշամատեան» կայքէջ (<https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/erzurumvilayet/yerzengakaza/religion/churches.html>), այց՝ 20 Փետրուար, 2024։

Միաբանական ընդհանուր ժողովի ատենադպիր, տարի մը վերջ ալ՝ ատենապետ։ Ձեռնադրուած է 24 Մայիս, 1909-ին, ձեռամբ Յարութիւն Պատրիարքի։ Ներմիաբանական վերոյիշեալ լարուածութեան շրջանին ան ալ վանքէն վտարուած հոգեւորականներէն մէկն էր<sup>62</sup>։ 14 Սեպտեմբեր, 1910-ին Կամախի առաջնորդական տեղապահ ընտրուած է։ 16 Յունիս, 1913-ին զուգահեռաբար կը ստանձնէ նաեւ Երզնկայի առաջնորդական փոխանորդութիւնը, զոր կը վարէ մինչեւ իր նահատակութիւնը։ Ճիշդ է, որ Երզնկայի թեմի առաջնորդ կարգուած էր Սահակ Վրդ. Օտապաշեան, որ սակայն նահատակուած է՝ Սեբաստիայէ դէպի Երզնկայ ճամբուն վրայ, 12 Յունուար, 1915-ին, Սեբաստիոյ կուսակալ Մուամմէրի հրահանգով ստեղծուած հրոսակախումբի կողմէ<sup>63</sup>։ Հովիւեան ծածկանուններով երկար ատեն աշխատակցած է ամերիկահայ, եգիպտահայ, պոլսահայ, զմիւռնահայ եւ ռուսահայ թերթերու<sup>64</sup>։

Գաբամաճեանի այս ցանկը, զոր կարելի է հաստատել նաեւ Թէոդիկի տուեալներով, կ'ընդգրկէ միայն Երուսաղէմի նահատակ միաբանները։ Այս անունները զիրար միացնող պարագան, դժբախտաբար, այդ թուականներուն պատահած ներմիաբանական անհաշտութեանց ու խռովութեանց հետեւանքով իրենց վանքէն հեռացումը եղած է։ Մինչդեռ վանքը թերեւս ամենէն ապահով վայրն էր այդ տարիներուն ու անոնք կրնային խուսափիլ մահուան ճիրաններէն, եթէ հոն գտնուած ըլլային։ Այս անուններուն կարելի է աւելցնել նաեւ այն նահատակ հոգեւորականները, մանաւանդ քահանաները, որոնք ճիշդ է որ Ս. Աթոռի միաբան չէին, սակայն իրենց եկեղեցական պատրաստութիւնը ստացած էին Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանէն՝ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Թուրեան (առաջնորդ Տրապիզոնի), Տ. Մկրտիչ Քհնյ. Յովհաննէսեան (երէց Քղիի), Տ. Սահակ Ա. Քհնյ. Տէր Սահակեան (Եսայի Պատրիարքի ձեռնասունը, երէց Խարբերդի Քեսրիկ գիւղի), Տ. Եղիշէ Քհնյ. Խաչատուրեան (Մալաթիա), Տ. Մարտիրոս Ա. Քհնյ. Զարդարեան (Կեսարիա), Տ. Նշան Ա. Քհնյ. Բարունակեան (Պալքէսի)։

Աւարտելէ առաջ խոնարհաբար կ'առաջարկեմ Ս. Աթոռոյ վերին իշխանութեանց՝ Մեծ Եղեռնի սուրբ նահատակներու առընթեր, յանուանէ յիշատակել Ս. Յակոբեանց միաբանութեան նահատակ միաբանները՝ հայցելով անոնց բարեխօսական աղօթքը ի պայծառութիւն Ս. Աթոռոյ ու Ս. Յակոբեանց զինուորեալ միաբանութեան եւ յարեւշատութիւն Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, մաքուր մաղթանօք սրբոց վկայիցն, որոց վարուց եւ մահուան գիրս յօրինեցաք, Քրիստոս Աստուած ընդ մեզ հաշտեցի եւ Սրբոյ Աթոռոյս յիշատակն ընծայողաց ինքն ողորմեցի։

**ՍԵԻԱՆ Կ.ՍՐԿ. ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ**

<sup>62</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 5941։

<sup>63</sup> Ռոբերտ Թաթոյեան, Երզնկա – եկեղեցիներ եւ վանքեր 1, «Յուշամատեան» կայքէջ (<https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/erzurumvilayet/yerzengakaza/religion/churches.html>), այց՝ 20 Փետրուար, 2024։

<sup>64</sup> Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Թէհրան, 2014, էջ 162։